Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (18 դասաժամ), երաժշտության (4 դասաժամ) տեխնոլոգիայի (տղաների խումբ, 8 դասաժամ), ռուսաց լեզվի (19 դասաժամ), պատմության (10 դասաժամ), հասարակագիտության (2 դասաժամ), ՆԶՊ-ի (1դրույք) եւ քաղպաշտպանության (0,5 դրույք)ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի մնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ մնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ապրիլի 6-ից մինչ եւ ապրիլի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա ապրիլի 21-ին՝ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Հայանիստ, Հայկ Բժշկյանց 6:

Տեղեկությունների համար զանգահարել՝(093) 66-66-25 հեռախոսահամարով: